

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Գանատայի վարչապետին ուղերձը պատմակշիռ եղելոյթ էր
Հայոց Յեղասպանութեան ճանաչման հռչակոյթին մէջ

Համաշխարհային Համավարակի առթած ճգնաժամին պատճառով, 2020 թվականի Ապրիլ 24-ի Հայոց Ցեղասպանությունն ոգեկոչումը տարբեր բնոյթ կրեց Գանատայի մէջ: Չկային Օթթաուայի մէջ տողանցող պահանջատէր հայ երիտա-սարդութեան կողմ շարքերը, չէին լսուեր բարձրախօսներէ հնչող հայութեան ար-դար իրաւունքներու կոչերը:

Յիշատակումը այս անգամ կայացավ Գանատայի Հայ Դատի յանձնախումբ-
բին եւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ պատ-
րաստուած յատուկ յայտագրի առցանց սփռումով, որուն կիզակէտն էր Գանատայի
վարչապետ Ճասթին Թրուտոյի պատմական ուղերձը:

Ողջունելով Հայոց Յիզասպանութեան 105-ամեակին նուիրուած Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած առցանց ոգեկոչումը, Գանատայի Վարչապետ Ճասթին Թրուտո տեսանիւթով ներկայացուած յատուկ ուղերձով խստօրէն դատապարտեց Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Հայոց Յիզասպանութիւնը եւ անդամ մը եւս վերահաստատեց Գանատայի պետութեան Հաստատ կեցուածքը:

Շեշտը դնելով նաև ոճիրն ու յանցագործությունը յիշելու եւ յիշեցնելու անհրաժեշտութեան եւ պարտաւորութեան վրայ, Գանատայի վարչապետի ուղերձը միաժամանակ կը դատապարտէր նաև Անգարայի ուրացման եւ անյիշողութեան քաղաքականութիւնը:

Հայուժթիւնը երախտահատոյց է Գանատայի ժողովրդավար պետութեան, որուն ծերակոյտն եւ խորհրդարանը, յաջորդաբար 2002-ին եւ 2004-ին յատուկ բանաձեւերով հաստատած են Հայուժեան դէմ գործադրուած ոճիրը, իսկ 2006 թուականի Ապրիլ 21-ին, Գանատայի կառավարութիւնը՝ վարչապետ Սթիվըն Հարփըրի յայտարարազրով ճանչցած է Հայոց ցեղապանութիւնը եւ այդ ճանաչումը հաստատադրած, որպէս պետական քաղաքականութիւն:

Յայտնատեսությունների չի կարողորդ այն իրողությունները, որ ինչպես անցեալին, նոյնպէս այսօր, Գանատայի տարածքին անխափան կը գործէ թուրք-ատրպէճանական հակահայ քարոզչութեան մեքենան: Այս քարոզչական առճակատման բոլին մէջ, Հայ Դատի յանձնախումբի հետեւողական լոպպիստական ճիգերուն իբրեւ արդիւնք՝ կազմաքանդման ենթարկուեցաւ թրքական հակաքարոզչութիւնը, որ վերջին տարիներուն վերածուեալ է Օթթաուայի մէջ Ապրիլ 24ի թուրք վարձկաններու խղճալի հակացոյցի:



Հայ Դատի յանձնախումբի պատրաստած ոգեկոչման ծրագիրը զգաստութեան կոչ էր Անգարայի, որ անյետաճգելի պահն է կատարուած յանցագործութիւնը պետականօրէն ճանչնալու, միաժամանակ պետական բանականութիւնը գործադրելու եւ թուրք քաղաքացիական հասարակութեան առիթ ընծայելու պատմութեան հետ առերեսուելու եւ դատակշիռու նախնինքրու կատարած եղեռնագործութիւնը:

Հայ Դատի յանձնախումբը իր առաքելութիւնը կը շարունակէ Գանատայի դաշնակցային պետութեան օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու, ինչպէս նաեւ նահանգային թէ քաղաքապետական օղակներու մէջ եւ այդ գործունէութեան յենարանն ու ուժի աղբիւրը առաջին հերթին գանատահայրութիւնն է, որուն կենսութիւն ու պահանջատիրութեան անկոտրում թափը յառաջ կը մղեն յանձնախումբի առաքելութիւնն ու աշխատանքները:

Յանձնախումբը իր գործունեութեամբ կը տանի բազմաբեկեռ աշխատանք, յատկապէս ծանրանալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման, Հայաստանի Հանրապետութեան հզօրացման եւ Արցախի ինքնորոշման իրաւունքի ամրագրման վրայ:

Այս է Հայ Դատի յանձնախումբի առաքելութիւնը, որ իր ամբողջական ներուժը ի սպաս դրած է գնանատաՀայ Համայնքի ազդային ինքնաճանաչման, հայրենատիրութեան, հայու արժանապատուութեան ու լինելութեան ի խնդիր:


www.horizonweekly.ca
 facebook.com/pages/horizonweekly
 [horizonweekly](https://instagram.com/horizonweekly)
 [@horizonweekly](https://twitter.com/horizonweekly)
 [YouTube – Horizon Weekly TV](https://youtube.com/HorizonWeeklyTV)

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



Համազգայինը՝ նոր մարտահրավերներու դիմաց

Աշխարհը ամլացած է: Համաշխարհային մակարդակով ստեղծուած է առնուազն մեր օրերուն համար անսխառդէպ իրավիճակ:

Համազգայինը անշուշտ անմասն չէ այս համաճարակի հետեւանքով ստեղծուած ընդհանուր կացութենէն եւ ըստ այնմ պատշաճեցուցած է իր աշխատանքը, արագօրէն փոխած է իր աշխատելաոճը միշտ կառչած մնալով իր սկզբունքներուն եւ տեսլականին, շարունակելով իր առաքելութիւնը:

Հաւատարիմ իր կոչումին, կրթական մարզը, համաճարակի առաջին օրերէն իսկ իր ձեմարաններով սկսած է հեռավար դասաւանդութեան, եւ ուսուցիչ-աշակերտ կապը մնայուն է: Մեր վարժարաններու տնօրէնութեանց, ուսուցչական կազմերու եւ պաշտօնէութեանց անվերապահ օժանդակութեամբ եւ նուիրուածութեամբ կարելի կը դառնայ այս մարտահրաւէրը եւս յաջողութեամբ դիմագրաւել: Անշուշտ, քաջ կը գիտակցինք, որ առօրեայ դասաւանդութիւնները եւ կենդանի կապը կարելի չէ ամբողջութեամբ փոխարինել համակարգչային նոր մեթոտներով, սակայն կը փորձենք հասնիլ կարելի լաւագոյն արդիւնքին. այս առիթով կը շնորհակտրենք մեր ձեմարաններու անձնակազմերը եւ հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնենք անոնց. իրենց ցուցաբերած անսակարկ նուիրումը անպայման կը յիշեցնէ Համազգայինի ռահվիրայ սերունդը: Արդարեւ՝ այս տարի Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեանի եւ իրենց ընկերներու հիմնած ձեմարանի 90-ամեակն է. ուրախ ենք տեսնելով, որ այդ տիտաններու ժառանգորդները հաւատարմօրէն կը շարունակեն քալել անոնց հետքերով: Նոյնը կարելի է ըսել Համազգայինի չըջանային մակարդակի վրայ գործող զանազան ընոյթի կրթական-գեղարուեստական հաստատութիւններուն համար:

Նշենք նաեւ, որ այս տարի Մարտէյի ձեմարանի 40-ամեակն է: Մարտէյի Համազգայինի երկկեզու ձեմարանի տարածքը, ներկայ միջազգային թոհուրոհին մէջ, շնորհիւ խնամակալութեան ջանքերուն դարձաւ Համազգայինի սեփականութիւնը. ներկայիս խնամակալութիւնը կը պատրաստէ դպրոցի կարելիութիւնները ընդլայնելու ծրագիրը: Ինչ որ կը նշանակէ, թէ ապագային ձեմարանը ի վիճակի պիտի ըլլայ ընդունելու աւելի մեծ թիւով աշակերտներ, գոհացում տալով չըջանին մէջ վերջին տարիներու ստեղծուած կենսական պահանջին:

Համազգայինի համացանցային հարթակը (h-pem) արդէն տարի մըն է, որ կը շարունակէ իր աշխատանքը՝ ոչ հայախօս հայ երիտասարդութեան եւ ոչ հայ հանրութեան ծանօթացնելու համար հայ մշակոյթը իր զանազան երեսներով: Մեկուսացման այս օրերուն h-pem-ը եւս իր աշխատանքները պատշաճեցուց ստեղծուած նոր պայմաններուն: Աշխատակազմը կապեր հաստատեց հայ մշակոյթի տարբեր մարզերու մէջ գործող հանրածանօթ մասնագէտներու եւ արուեստագէտներու հետ եւ յատկապէս բեմին համար անոնց պատրաստած տեսանիւթերով խորհուրդներ փոխանցեց իր հետեւորդներուն: Նոյն նպատակով h-pem-ը զանազան հրապարակումներով կը փորձէ բարձրացնել իր մեկուսացած հետեւորդներուն տրամադրութիւնը, եւ հաճելին օգտաշատին միաձուլելով անոնց կ'առաջարկէ մշակութային ժամանցի հետաքրքրական նմոյշներ:

Համազգայինի մանկական «Լալան ու Արան» ծրագիրը իր ընկերային ցանցերը կը տրամադրէ հայ մանուկներուն՝ անոնց անմիջական մասնակցութիւնը ապահովելով. ան նաեւ կը տարածէ մանկական օգտաշատ գիտելիքներ եւ աշխատանքներ, մասնագէտ մանկավարժներու կողմէ պատրաստուած: Այս օրերուն նաեւ լոյս տեսաւ Լալայի ու Արայի պատմութեան առաջին գրքոյկը իր ելեկտրոնային տարբերակով:

Միաժամանակ Համազգայինի աշխարհատարած բոլոր միաւորները իրենց առցանց ներկայութեամբ կը յազեցնեն մեր ժողովուրդի մշակութային ծարաւը, մատուցելով որակաւոր կատարումներ եւ ներկայացումներ: Համազգայինի Հայաստանի գրասենեակը կանոնաւոր պարբերականութեամբ հայ մշակոյթի վարպետներու մասին իր տրամադրութեան տակ գտնուող ֆիլմեր համացանցով կը հրամցնէ հանրութեան, իսկ Արցախի եւ Ջաւախքի գրասենեակները իրենց կապը կը փորձեն պահել առցանց դիտումներ կամ մրցումներ առաջարկելով:

Համազգայինի գրատարածը նոյնպէս Լիբանանի մէջ կազմակերպեց մանկական գծագրութեան մրցում, ինչպէս նաեւ անվճար գիրքեր հասցնելու կարելիութիւնը ստեղծեց ընթերցողներուն համար: Ե-գրադարանը հասանելի դարձաւ ամբողջ աշխարհին իր թարմացած բովանդակութեամբ:

Այս բոլորը կը շարունակուին շնորհիւ Համազգայինի կամաւոր նուիրեալներուն եւ հայ մշակոյթի պահպանման, տարածման ու զարգացման հաւատացողներուն:

Ինչպէս ցոյց կու տան վերոնշեալ օրինակները Համազգայինը կը շարունակէ գործել իր տասնամեակներու գոյութեան ներկայի ամենէն անպաստ պայմաններու մէջ ալ: Մեկուսացման այս հանգրուանին մենք չենք առանձնացած, անհատներու չենք վերածուած: Այլ՝ բոլոր ժամանակներէ աւելի համախումբ ենք. կը մնանք գործօն ու ուժեղ, յաղթահարել կարենալու համար մեր դէմ ցցուող բոլոր տեսակի խոչընդոտները:

Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ

Մոնթրէալի Շտապ Օգնութեան յանձնախումբը 1000 դիմակներ կը նուիրէ Մոնթրէալի McGill University Health Centre-ի Glen հիւանդանոցին համար



Մոնթրէալի Հայ Կեդրոնի Շտապ Օգնութեան յանձնախումբը վերջերս լծուած էր բժշկական դիմակներ պատրաստելու աշխատանքին՝ Մոնթրէալի McGill University Health Centre-ի Glen հիւանդանոցի դիմումին ընդառաջելով: Յարգ այս հիւանդանոցին տրամադրուած են 1000 բժշկական դիմակներ: Դիմակները կարելու գործը յանձն առած են Հ.Օ.Մ.-ի Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերու կամաւոր ընկերուհիները: Արդէն 1000 դիմակներու նոր խմբաքանակը պատրաստ է եւ մօտ ատենէն պիտի յանձնուի վերոնշեալ հիւանդանոցի տեսչութեան:

Մոնթրէալի Հ.Յ.Դ. Միհրան Փափազեան կոմիտէի կազմած Մոնթրէալի Հայ Կեդրոնի Շտապ Օգնութեան յանձնախումբին մաս կը կազմեն Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութեանց՝ Սուրբ Յակոբ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան, Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի, Հ.Օ.Մ.-ի «Սօսէ» մասնաճիւղի, Հ.Մ.Ը.Մ. «Կամք»-ի եւ ՀՅԴ Գ.Ե.Մ.-ի «Բեկոր Աշոտ» եւ «Լեւոն Շանթ» մասնաճիւղերու վարչական անդամներն ու ներկայացուցիչները:

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը սննդեղէնի ծրարներ կը բաշխէ հայ տարեցներուն

Համաճարակի ներկայ կացութեան հետեւանքով, Քեպէգ նահանգի կառավարութիւնը նպաստներ կը տրամադրէ այն բարեսիրական կազմակերպութիւններուն, որոնք ժողովուրդի կարիքներուն օգնութեան կը փութան: Այս ծիրէն ներս, ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը 2000 տոլար արժողութեամբ նպաստ ստացաւ Աէն Լորան ընտրատարածքի դաշնակցային երեսփոխան տիկ. Մարուա Բըզքի գրասենեակէն: Տիկ. Մարուա Բըզքի անձամբ յանձնեց նպաստի գումարը ՀՕՄի վարչութեան անդամ ընկհ. Թամար Եաղճեանին:

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը անմիջապէս աշխատանքի լծուեցաւ եւ հարկ եղած գումարները կատարեց՝ պատրաստելու սննդեղէնի ծրարներ, որոնք բաշխուեցան Manoir Gouin-ի եւ Manoir Saint Moritz-ի տարեցներու համալիրներու հայ բնակիչներուն: Սննդեղէնի ծրարները պիտի բաժնուին նաեւ ՀՕՄի ընկերային ծառայութեան գրասենեակի «Տաք ճաշ» ծրագրի երէցներուն, որոնք կ'ապրին առանձին:

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՍՈՒԹԲԵՒԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՍԻԼԹԸՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Ascenseur **Adams** Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Յիշեճք բոլորի՛ն ցաւը եւ մե՛ր ցաւը

Մեր ցաւը բոլորի՛ն ցաւն է, բոլորին ցաւը՝ մե՛ր ցաւը։

Այս իրողութիւնը աւելի քան ճշմարիտ է այս տարի, երբ աշխարհը կ’անցնի առողջապահական ան–չափելի տագնապի մը մէջէն։ Ճգնաժամի՛ մը մէջէն։

Յիշողութիւնները դարմացնելու համար կ’արժէ կարգալ չՅԴ ծրագրի հետեւալ պարբերութիւնները կամ անոնցմէ քաղուած հատուածները.

– Միջազգային օրէնքը, Միացեալ ազգերու կազ–մակերպութեան ուխտը եւ Մարդկային իրաւանց յայ–տարարութիւնը եւ, մասնաւորապէ՛ս, Յեղասպանու–թեան մասին ՄԱԿ–ի 1948–ի համաձայնագիրը ցեղաս–պանական արարքները կը յայտարարեն ոճիր մարդկու–թեան դէմ եւ անոնց հետեւանք հանդիսացող ազգային հողամասերու իւրացումը կը նկատեն ապօրինի։

– Բովանդակ մարդկութեան եւ համաշխարհային խաղաղութեան ի խնդիր, անոնք պէտք է գործադրուին՝ իրենց տառով ու ոգիով. նախ՝ արդարութիւն գործելու ցեղասպանութեան զոհ դարձած ազգերուն, ապա՝ կան–խելու համար նոր ցեղասպանութիւններ եւ մարդկու–թեան խնայելու նոր աղէտներ։

– Հայ դատի լուծումը ոչ միայն արդարութեան, Յեղասպանութեան դատապարտումին ու պատժարկման գործնական արտայայտութիւն է, այլեւ միջազգային իրաւունքի հարց մը՝ ազգերու ինքնորոշման անկապ–տելի սկզբունքին հիման վրայ։

Համալարակը, որ բռնկեցաւ անցնող ամիսներուն ու տակաւին կը շարունակէ իր աղէտալի տարածումը, գէթ այս տողերը գրուած պահուն, մեզ կը դնէ մեր հարցը դիտելու համաշխարհային ընդհանուր իրավի–ճակի խորապատկերին առջեւ, իսկ աշխարհի հարցը, հարցերը՝ մեր իրավիճակի պրիսմակէն։

Ի՛նչ պիտի փոխուի առողջապահական տագնա–պէն ետք (Ce qui va changer après la crise sanitaire) իր յօդուածով Simon Langlois՝ Լաւալ համալսարանի հանգստեան կոչուած փրոֆեսորը Le Devoir օրաթերթի 30 մարտ 2020–ի թիւին մէջ կը գրէ, թէ ներկայ առող–ջապահական տագնապը մեզ կը մղէ, որ գիտակցինք թէ որքան դժւրաբեկ է աշխարհը. «Սանձարձակ աճի դիւ–րաբեկութիւնը, ձեռք ձգուած նիւթական բարօրու–թեան, նոյնիսկ հանգիստի դժւրաբեկութիւնը, խնայո–ղութիւններու դժւրաբեկութիւնը, առողջապահական ապահովութեան դժւրաբեկութիւնը»։ Ան կ’աւելցնէ, թէ դժւրաբեկ է նաեւ մոլորակի բնապահպանութիւնը եւ «լուրջի պէտք է առնել այն սպառնալիքները, որոնք կը ծանրանան մեր երկրագունդին վրայ»։

Լանկլուա չի նշեր այլ սպառնալիքներ, որոնք դամոկլեան սուրի նման կախուած կը մնան մարդկու–թեան գլխուն վերեւ։ Փորձենք վերլիչել մի քանին։

Առաջինը՝ այն խոշոր խրամատը, որ հետզհետէ կ’ընդլայնի ու կը խորանայ հարուստ ու աղքատ եր–կիրներուն միջեւ բայց մանաւանդ ունեւոր ու չունեւոր դասակարգերուն միջեւ։

Ապա՝ բազում վայրերու մէջ փոքրամասնութիւն–ներու դէմ շարունակուող ու սաստկացող հալածանքնե–րը, անոնց ինքնութիւնը ջնջելու նորանոր փորձերը, անոնց մարդկային նուազագոյն իրաւունքները զլա–նալու ակնյայտ երեւոյթները, ջարդերը, զանգուածային տեղահանութիւնները, տարագրութիւնները եւ մասամբ նորին։

Վերջապէս՝ բնական հարստութիւններու զաւթու–մը փոքրաթիւ մենատէրերու կամ սակաւապետերու կողմէ, մարդուժի ծայրայեղ շահագործումը ոչ միայն այսպէս կոչուած տակաւին զարգացող երկիրներու մէջ, այլեւ նոյնիսկ, նոյնպէս այսպէս կոչուած, զարգացա՛ծ երկիրներուն մէջ։ Մարդու վերածումը արտադրական չուկայի մեքենայի մէկ մասնիկին։

Շարքը կարելի է երկարել, մանրամասնել, բայց այսքանն ալ բաւարար է, անդրադառնալու համար, թէ ժահրերը բազմապիսի են, բազմատեսակ, բազմերես։

Երկրորդ կարեւոր նշումը, որ կը կատարէ Սիմոն Լանկլուա իր յօդուածին մէջ այն է, թէ այսպիսի տագ–նապներու ատեն ի վերջոյ ի յայտ կու գայ պետութեան եւ ինքնակառավարման մարմիններու՝ նահանգային թէ տեղական մակարդակներու մարմիններու առկայու–թեան կարեւորութիւնը՝ համատեղ ճիգերով դիմակայե–լու համար աղէտները։ Եթէ որոշ թերահաւատութիւն յառաջացած էր քաղաքական կազմակերպութիւններու ու մարմիններու նկատմամբ,՝ ո՛չ սակայն առանց հե–տեւողական աշխատանքի այդ ուղղութեամբ՝ ամեն գնով նսեմացնելու համար պետականութեան կարեւո–րութիւնը՝ չուկային դէմ–յանդիման,՝ այս առիթը չա–փով մը կը վերահաստատէ հանրութեան վստահութիւնը կամ ակնկալիքը պետութեան դերակատարութեան նկատմամբ։

Այստեղ չեմ կրնար հարց չտալ, որ եթէ կան ա՛յդ–քան նիւթական անհաշուելի կուռաններ, նման աղէտ–ներու պարագային գործածուելու համար, ինչո՞ւ անոնց մէկ կոտորակն իսկ չի տրամադրուիր կանխելու համար աղէտները, բարելաւելու համար հասարակութեան վի–ճակը, բոլորը օժտելու համար մարդկային կեցութեան նուազագոյն պայմաններով՝ սնունդի, առողջապահու–

թեան ու գլխուն վրայ երդիքի մը ապահովմամբ։ Ին–չո՞ւ։ Բայց այդ արդէն դրամատիրութեան էութեան իսկ կը սպառնայ…

Այս առնչութեամբ յօդուածագիրն ալ կը հարցնէ, թէ արդեօք այս տագնապը բաւարա՞ր է զսպելու հա–մար «միշտ աւելին» ունենալու՝ ընչաքաղցութեան ձգտումը, որ ստեղծած է գերսպառումի ընկերութիւն մը, հասարակութիւնը մղելով տեւական պարտախրումի՝ պարտքերու մէջ իյնալու, մոռնալով խնայողասիրու–թեան, ժուժկալութեան առաքինութիւնները։ Պիտի աւելցնեմ՝ քայքայելով ընտանեկան կեանքերը, հասա–րակական գործունէութիւնը, հաւաքական նախաձեռ–նութիւնները։

Վերջին կարեւոր կէտը, որով Լանկլուա կ’եզրա–կացնէ իր գրութիւնը այն է, թէ տագնապը, որ մեծ մա–սամբ համաշխարհայնացման հետեւանք է, եկաւ ցոյց տալու ազգին, համայնքին կարեւորութիւնը՝ սեփական ճակատագրին տէր կանգնելու տեսակէտէն։

Փորձառութիւնը ցոյց տուաւ, որ պատրաստ պէտք է ըլլալ ամենէն ստորին մակարդակին իսկ վրայ, սակայն, պիտի աւելցնեմ, այդ չի նսեմացներ նաեւ բարձրագոյն մակարդակներու՝ ընդհուպ մինչեւ համա–մարդկային գործակցութեան կարեւորութիւնը։

Կ’ուզեմ աւարտել այս յօդուածս վերադառնալով չՅԴ ծրագրին, ուր աներկբայօրէն արձանագրուած է.

– Հայ յեղափոխական դաշնակցութեան համոզու–մով՝ ընկերվարութեան ճամբով է, որ մարդկութեան քաղաքական, մշակութային եւ ընկերային զարգացու–մը կ’օժտուի արդար եւ համերաշխ յարաբերութիւննե–րով։

– Ընկերվարութիւնը կը ձգտի, ինչպէս անհատի եւ անոր աշխատանքի ազատագրութեան, նոյնպէս ազ–գերու,՝ իբրեւ հաւաքական անհատականութիւններ,՝ ամբողջական ազատագրութեան, անկախութեան ու գերիշխանութեան եւ անոնց համերաշխ համակեցու–թեան ու իրաւահաւասար գործակցութեան։

Վերջապէս՝

– Հ. Յ. Դաշնակցութեան համար ազգը՝ իբրեւ պատմական–մշակութային, լեզուական եւ ընկերային քաղաքական ուրոյն ամբողջութիւն, հիմնական արժէք է եւ էական գործօն՝ համամարդկային զարգացման ու հոգեմտաւոր բազմակողմանի հարստացման։

Ահա այս լոյսին տակ ալ եթէ դիտենք մեր պա–հանջատիրութիւնը, կը հասկնանք, թէ ինչո՞ւ բոլորին ցաւը մե՛ր ցաւն է ու մեր ցաւը՝ բոլորի՛նը։

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Ուքե՞ր ԵՈ Այս Ներողները...

Ներելը քրիստոնէական եւ – մարդկայի՛ն – բա–րոյականի ամենէն նուիրական դրսեւորումն է, որուն լիովին ատակ պէտք է ըլլայ ամէն մարդկային էակ որ–պէսզի կարենայ հասնիլ ինքնանուաճման վերին եզրե–րուն եւ հոգիի իսկական խաղաղութեան։ Բայց նաեւ պայման է, որ լաւ հասկնանք, թէ ի՞նչ նժարի վրայ պէտք է չափուի ներման վեհագոյն այս արարքը։ Պէտք է յստակացնենք, թէ ի՞նչ չափանիշներ պիտի գործեն հոս, որպէսզի կարողանանք հեռու մնալ թեթեւամիտ փութկոտութիւններէ, որոնք ոչինչ կը բերեն կեանքի սեղանին բացի մարդկային սուտ յարաբերութիւններէ։

Խօսքը կը վերաբերի հայօրէն ապրելու այն մեծ մարտահրաւէրին, որ, այս պարագային, կապուած է Հա–յոց Յեղասպանութեան հետ հաշուի նստելու հոգեբա–նական հրամայականին։

Վերջերս հրապարակի վրայ կրկին յայտնուած են որոշ անձնաւորութիւններ, որոնք այս դժուար խօսոյթը կը տանին դիտաւորեալ աղաւաղման եւ ինքնաբերա–բար ջուր կը լեցնեն Թուրքիոյ եւ իր Արեւմտեան գոր–ծակիցներու հանրածանօթ – եւ վաղուց վարկաբեկուած – արշաւին։ Իսկ այդ արշաւին նպատակն է ապակողմ–նորոշել միջազգային կարծիքը եւ ցեղասպանութեան զոհ հանդիսացող մեր ժողովուրդի դատը «հաշտու–թեան» կեղծ տարազներով կապել աժան եւ շուտափոյթ լուծումներու։ Եւ – ինչո՞ւ չէ – յուսալով ՚որ այդ խա–ղին մէջ կը ներքաշուի նաեւ հայ պետականութիւնը։ Եւ ի՛նչ շնախանութեամբ հայ ուժերը կը փորձեն չարա–շահել մեր արժէքային աստակարբի այս սուրբ՝ ներո–ղամտութեա՛ն հասկացողութիւնը իրենց չարաշուք նպատակներուն հասնելու համար։

Բայց անշուշտ – եւ այս հարցին մէջ գէթ – անոնք իրենք գիրենք կը գտնեն մեր ժողովուրդի ար–թուն եւ զգաստ գիտակցութեան դէմ յանդիման, որ կը

մերժէ իյնալ այդպիսի թակարդներու մէջ։ Մենք վա–ղուց «ոչ» ըսինք TARC–ի նման խաղքութիւններու ԱՄՆ–ի մէջ հակառակ այդ գործերուն մէջ ներքաշուած հայանուն գործիչներու քարոզչութեան։ Մենք «ոչ» ըսինք նմանօրինակ այլ նախաձեռնութիւններու եւրո–պայի մէջ։ Հայ Դատի գրասենեակներն ու գործիչները ամէնուրեք բացալայտեցին եւ դիմակադերձեցին այս կարգի ոտնձգութիւնները մեր պահանջատիրութեան ոլորտէն ներս։ Եւ այդ գործը կանգ չէ առած եւ կանգ պիտի չառնէ։

Պէ՞տք է կրկնենք, թէ Հայ ժողովուրդին դէմ գործուած է նոր ժամանակներու առաջին ցեղասպանու–թիւնը, որ ոճիր է մարդկութեան դէմ։ Յեղասպանու–թեան նշաւակ մեր ժողոովուրդը եղած է միաժամանակ հայրենագուրկ եւ ընչազուրկ։ Այս փաստը հաստատ–ուած է միջազգային դաշնագրերով։ Ստեղծուած է մէկ ամբողջ միջազգային օրինակարգ Հայոց Յեղասպանու–թեան անհերքելի փաստին շուրջ։ Հայոց Յեղասպանու–թեան համար անառարկելիօրէն պատասխանատու են Թուրք պետութիւնն ու Թուրք ժողովուրդը։ Եւ Յեղաս–պանութենէն բխող մեր պահանջատիրութիւնը նախ եւ առաջ տարածքային է, յետոյ նաեւ մշակութային, հո–գեւոր եւ տնտեսական։ Հիմա ի՞նչն է, որ պէտք է ներել եւ ո՞վ է, որ պիտի ներէ։ Եւ ի՞նչ նորմերու հիմնաւո–րումով պիտի գործէ ներման այդ արարքը։

Բոլոր անոնք, որոնք կը փորձեն այս հարցին բա–րոյական ենթահողը յստակացնել, պէտք է նախ եւ առաջ հարցը դնեն իր իսկական համարադեփոստին մէջ։ Ան, որ ներման ակնկալութիւն ունի, նախ եւ առաջ պի–տի արժանի ըլլայ ներման ազնիւ արարքին։ Ներման ակնկալութիւն ունեցողը պիտի կարողանայ հասնիլ բարոյական այն չափանիշին, երբ առաջին հերթին՝ ինք ինքզինքի՛ն է, որ պիտի կարողանայ ներել գործուած

հրէշային յանցագործութեան համար… եւ պէտք է պատրաստ ըլլայ տալու իր ամէն ինչը հասնելու համար այդ բանին։ Այս մեծ դինն է, որ կը դնէ քրիստոնէա–կան վարդապետութիւնը ներման արարքին վրայ։ Հարց տուէք դուք ձեզի։ Թուրք պետութիւնն ու ժողովուրդը երբեւիցէ մօտեցա՞ծ են այս եզրերուն։ Ճիշտ է. գոյու–թիւն ունի փոքր թիւ մը անհատ մտաւորականներու, որ կը փորձէ հաշուի նստիլ իր անցեալին հետ։ Յուսամ ան–վերապահօրէ՛ն։ Յամենայն դէպս մեր սիրտը իրենց հետ է այդ մեծ ճիգին մէջ։ Բայց այդ խումբը չէ, որ կը վճռահատէ այս կնճռոտ խնդիրը։ Թուրք պետութիւնն ու ժողովուրդը երբեւէ կրցա՞ծ են հասնիլ բարոյական եւ քաղաքական այն գիտակցութեան, որ ունենան պատրաստակամութիւնը ընդունելու իրենց պարտքն ու պատասխանատուութիւնը եւ պատրաստ ըլլան հատուց–ման բանակցութիւններու։ Ընդհակառակն այսօր իսկ Թուրք պետութեան քաղաքականութիւնն է Հայաստա–նը վերածել պատանդ երկրի եւ ի վերջոյ վերջ տալ անոր գոյութեան։

Թուրքիան այսօր իսկ կը շարունակէ իր փան–թուրքիստական եւ ցեղասպանական քաղաքականու–թիւնը տարածաշրջանին մէջ եւ կը գործէ իր հին ծաւա–լապաշտ նկրտումներով։ Մերկ փաստը այն է, որ Թուրքիոյ հետ մեր քաղաքական կապը «բարի–դրացի–ական» չէ Թուրք պետութեա՛ն իսկ ընտրութեամբ եւ որոշումով։ Մեր կապը այսօր սերտօրէն առընչուած է ցեղասպան երկրին դէմ պաշտպանուելու հրամայակա–նին։ Մենք ունինք Թուրքիոյ դէմ մեր երկրի անվտան–գութիւնը ապահովելու ամէնօրեայ խնդիր։ Իսկ ցեղաս–պանը, որ չէ դադրած ցեղասպան ըլլալէ, իրաւունք չունի ներում ակնկալելու մեր ժողովուրդէն։

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՅԻՍԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ



28 Մայիս, 1918 և 28 Մայիս, 2020:
102-րդ ամեակ Անկախ Հայաստանի
Առաջին Հանրապետության:
Հայ ժողովուրդը արդար իրատունքը ունի
ուրախանալու, տոնախմբելու և յաղթական
իր երթը շարունակելու: Վեց հարիւր և ասելի
տարիներու ընդմիջումէն ետք, մեր ժողովուրդը
վերստին տէրն է հայոց պետականության:

Ճիշդ է, որ մեր ժողովուրդը ցե-
ղասպանության ենթարկուեցաւ Արևմտա-
հայաստանի մէջ, թուրքը փորձեց Արևմտա-
հայաստանի հայութիւնը բնաջինջ ընել,
սակայն, հայ ժողովուրդը, Քրիստոսի Յա-
րութեան օրինակով յարութիւն առաւ և
վերստին կեանքին նայեցաւ, վերընձիղելով
իր կամքը, ուժն ու կորովը: Յարութիւն մը, որ

լինելութեան, գոյութեան, ապրելու կամ մեռնելու, մահուան կամ ազատութեան
խնդիր էր: Մեր ժողովուրդը Արամներու, Դրօսներու, Նժդեհներու և Գարեգիններու
առաջնորդութեամբ կրցաւ ոգևորուիլ և կեանքին նայիլ՝ ապրելու, ապրեցնելու և
յաւերժացնելու համար հայկազնեան ազգը:

1918 թուականի Մայիս 28-ին Էջմիածնի զանգերու դօղանջին ներքոյ, մեր
ժողովուրդը մէկ բռունցք դարձած, Արարատեան դաշտ իջաւ պայքարելու, մէկ
խօսքով՝ Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի գոյամարտին,
աշխարհական թէ եկեղեցական, տարեց թէ երիտասարդ, կին թէ տղամարդ, բոլորը
միասին ու միակամ եկան հաստատելու, որ մենք մեր յոյսը ուրիշին վրայ չենք դնել,
այլ՝ Աստուծոյ ու մեր սեփական զօրութեան՝ մեր միասնականութեան վրայ:

Երևանի երկնականմարին ծածանեցաւ Եռագոյնը՝ հայկական պետական
դրօշը, և մեր ժողովուրդը կրցաւ տէրը դառնալ և կառչած մնալ իր հողին,
արժէքներուն, սրբութիւններուն ու արժանապատուութեան:

Այսօր մեր ժողովուրդը, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, նոյն պատգամը
պարտաւոր է լսել՝ կառչած մնալու մեր նահատակներու արիւնով շաղախուած
հողին, կառչած մնալու մեր արմատներուն, մեր անժամանցելի գանձերուն և
սրբութիւններուն:


Նայինք անցեալին, մեր հերոսներու ոգիին, ապրինք այսօրը և կերտենք
վաղուան մեր պայծառ ապագան՝ մեր յաղթական ապագան, այլապէս ինչ իմաստ
ունի հայրենիք, հող, անկախութիւնն ու անկախ պետականութիւնը:

Իմ մաղթանքս է, որ մեր ժողովուրդը այս գիտակցութեամբ յաղթանակներ
ապահովէ՝ բոնցկացած արժանապատիւ կեցուացքով:

Այսօրուան փոքրիկ Հայաստանը դառնայ տեսլականը մեր վաղուան ազատ,
անկախ ու ամբողջական Հայաստանին, որպէսզի այս անգամ, բանաստեղծին
բառերով՝ Արարատի լեռան վրայ ծածանուի «արիւնէն ծորած երիզ մը կարմիր,
երկնքէն պոկուած կտոր մը կապոյտ, և հասուն հասկերու շողը՝ նարնջագոյն, և վեց
դարերու խաւարին վրայ՝ դրօշը եռագոյն»:

Փառք Մայիս 28 կերտող մեր հերոսներուն:
Խունկ ու աղօթք մեր նահատակներուն:
Յաւերժ փառք ՀԱՅՈՒԹԵԱՆ ու ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



Յիսուսի առաջին ու վերջին գործը
եղաւ Աստուծոյ կամքը կատարել. **«Ո՛չ թէ
իմ կամքս, այլ քու կամքդ թող ըլլայ»**
(Գկ 22.41): Իսկ Աստուծոյ կամքն է՝ **«որ
չկորսնցնեն ո՛չ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝
որ ինձի տուաւ»** (Յհ 6.39):

Յիսուս իրեն եկողը կը դաս-
տիարակէ, կը սորվեցնէ, կը բժշկէ,
յաւիտենական կեանք կու տայ անոր, այլ
խօսքով՝ իր ողորմութեան արժանի կը
դարձնէ՝ փրկութեան հասցնելով զայն:

Քրիստոսի հետ քալելու, Իրմով
ապրելու, իր մարմինն ու արիւնը ճա-
շակելու և խմելու պսակը պիտի ըլլայ մեր
յարութիւն առնելը և յաւիտենական կեանք
ունենալը: Եւ այս հրաւերը ուղղուած է
բոլորին անխտիր, բոլոր անոնց՝ որոնք կը
տեսնեն Որդին և կը հաւատան անոր:

Տեսնել Որդին կը նշանակէ՝ Աս-
տուծոյ կամքը իմանալ և կատարել:

Ա՛յս է ահաասիկ բարի լուրը,
աւետիսը, այն՝ որ մինչ առաջին Ադամին
անհնազանդութեամբ կեանքի ծառի
ճամբան փակուեցաւ մեր դիմաց, երկրորդ
Ադամին՝ Քրիստոսի բերած շնորհքովը
այդ ճամբան ահա կրկին կը բացուի
բոլորիս առջև:

Տեսնել Յիսուսը, կը նշանակէ
բաց սրտով ընդունիլ Աստուծոյ տուած
աւետիսը, սորվիլ Անկէ, հաւատալ
Քրիստոսի:



Ս. ԶԱՏԻԿԷՆ ՀՈԳԵԳԱԼՈՒՍ



ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

Զատիկէն մինչև Հոգեգալուստ երկարող շրջանին մէջ նշուող յիսուն օրերու տօները Տէրունի տօներ են, որոնցմէ վերջինը, յիսուներորդ օրը՝ Հոգւոյն Սրբոյ Գալստեան տօնն է։

Հոգեգալուստը Քրիստոնէութեան գլխաւոր տօներէն մէկն է, որ յիշատակումն է առաքեալներուն վրայ Սուրբ Հոգիի իջման։

«Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն և լեցուց ամբողջ տունը, ուր նստած էին։ Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան և հանգչեցան իւրաքանչիւրին վրայ։ Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան և սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար»։ (Գրծ. 2: 2-4)

Ըստ Նոր Կտատակարանին, այս իրադարձութիւնը տեղի ունեցած է Յիսուս Քրիստոսի Յարութիւնէն 50 օր ետք։ Հետևաբար, Եկեղեցին ալ այս հրաշալի դէպքը կը յիշատակէ Սուրբ Յարութեան տօնի 50-րդ օրը (Մայիս 31)։

Հոգեգալստեան այս սքանչելի դէպքէն վերջ, Քրիստոսի առաքեալները, Սուրբ Հոգիի շնորհներով լեցուած, կը մեկնին աշխարհի զանազան երկիրները՝ Տիրոջ Աւետարանը քարոզելու համար։

*Առաքելոյ աղանդ.
իջանկով մեծաձայն հնչմամբ ի բարձանց.
ի նմանութիւն լուսոյ փայլման
հրազինեաց անկիզելի զաշակերտսն.
մինչդեռ նարէին ի սուրբ վերնասարանն։*

*Աննիթական աղանի.
անքննելի որ քննէ գիտրս Աստուծոյ.
գոր առեալ ի Հօրէ պարմէ
զահաւոր և զմիսանգամ զպուտրն.
գոր քարոզեցին համագոյական։*


*Օրհնութիւն ի բարձունս.
ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ.
որով առաքեալքն արբեցան
անմահական բաժական.
և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։*

ԵՐԵՒՈՒՄՆ Ս. ԽԱԶԻ

Ս. Զատիկին յաջորդող չորրորդ Կիրակին (Մայիս 10), Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի Երևման տօնը։

Այս տօնը յիշատակութիւնն է պատմական դէպքի մը՝ 7 Մայիս 351-ին, Կիրեղ Երուսաղէմացի հայրապետին օրով, Մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի խաչի նշանի երևման։ Ըստ աւանդութեան, այդ օրը, Երուսաղէմի երկնակամարին վրայ երևցած է լուսաշող Ս. Խաչը, որ կը տարածուէր Գողգոթայէն մինչև Զիթենեաց լեռ։

Այս դէպքին ականատես եղած են Երուսաղէմի մէջ բնակող քրիստոնեաներն ու այլ դաւանանքներու ու կրօններու հետևող մարդիկ։ Խաչի պայծառ երևումէն արեգակը մթագնած է, բոլորը շտապած են եկեղեցի, աղօթած են առ Աստուած՝ այս մեծ շնորհքին արժանացած ըլլալու համար։ Հրաշքին շնորհիւ շատեր հաւատացած են Յիսուսին, մկրտուած են և անդամագրուած՝ Քրիստոսի Եկեղեցւոյ։





ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ



Համբարձումը Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ Տէրունի տօներէն մէկն է, որ շարժական տօն է և կը նշուի Քրիստոսի հրաշափառ Յարութենէն 40 օրեր ետք՝ Հինգշաբթի օրը (Մայիս 21):

Յարութենէն ետք, Յիսուս բազմաթիւ առիթներով երևցաւ իր աշակերտներուն. 40-րդ օրը, Ան իր 11 աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ու յայտնեց անոնց, թէ *«Երբ Ս. Հոգին իջնէ՛ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի, Հրէաստանի եւ Սամարիայի մէջ մինչև աշխարհի ծայրամասերը»*: (Գրծ. 1:8)

Այնուհետև Քրիստոս երկինք բարձրացաւ և նստաւ Հօր աջ կողմը: (հմմ. Մարկոս 16:19)

Համբարձման տօնը նաև հայկական շատ ժողովրդական տօն մըն է. Ան կը պատահի ընդհանրապէս գարնան կէսերուն և առիթ կու տայ ժողովուրդին երթալու դէպի դաշտերն ու լեռները և զանազան խաղեր, մրցումներ ընելու, արական խումբերու համար, իսկ կիներուն ու աղջիկներուն սովորութիւնն է Համբարձման վիճակ քաշել և անով զուարճանալ, ինչպէս նաև զանազան երգեր ու պարեր կատարել: Տակաւին շատ մը գիւղերու և նոյնիսկ քաղաքներու մէջ այս սովորութիւնը կը մնայ և առիթ կու տայ ժողովրդական աւանդութիւններու յաւերժացումին:

ԱՂՕԹՔ՝ ՀԱԻԱՏՈՅ ՀԱՅՐ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉԻ



Օրհնեալ է քու անբաւ մարդասիրութիւնդ, Տէր իմ Յիսուս Քրիստոս: Ինչո՞ւ կը լքես զիս. եթէ մեղքերուս համար է, Դո՛ւն միայն առանց մեղքի ես, և անունդ իսկ անոխակալութեան ու մարդասիրութեան ցուցանիշ է:

Գթա՛մ ինձի, որովհետև Դո՛ւն միայն մարդասէր ես: Փրկե՛ զիս, որ մեղքերու մէջ ինկած եմ, որովհետև Դո՛ւն միայն մեղք չունիս: Վերցնո՛ր զիս անօրէնութեանս տիղմէն, որպէսզի յաւիտեան ընկղմած չմամ հոն: Ազատե՛ զիս թշնամիէս, որովհետև ան առիւծի նման կը մոնչէ, և կ'ուզէ զիս կլլել:

Արդ, Տէր իմ, Քու շանթահարող փայլատակումովդ կործանե՛ անոր զօրութիւնը. թող վախճայ և խաւարին պէս չքանայ Քու ներկայութենէդ, որովհետև ան տկար է և անզօր՝ դիմադրելու ո՛չ միայն Քեզի, այլ նաև ամէն անոնց՝ որոնք Քեզ կը սիրեն: Երբ խաչիդ նշանին զօրութիւնը կը տեսնե՛ կը զարհուրի, և ամօթով կը հեռանայ բոլոր անոնցմէ, որոնք Քեզի կը դիմեն:

Այժմ, Տէր, փրկե՛ զիս և կեանք տուր ինձի, որովհետև Քեզի՛ ապաւինեցայ: Այս նեղութենէն դո՛ւրս բեր զիս, որպէսզի չըլլայ թէ զիս յաւիտենական կորուստի մատնէ՛ նենգաւորը, որ ծածուկ հնարքներով հետս կը մարտնչի:

Դո՛ւն, որ տէրն ես խորհուրդներուն, և կը քննես սիրտերն ու միտքերը, զգուելի ու պիղծ խորհուրդներէն մաքրե՛ սիրտս ու մտածումներս, որպէսզի յաւիտենական կորուստով ի սպառ չկորսուիմ:

Դո՛ւն, որ ամենակարող ես, գթա՛մ ինձի, ո՛վ իմ Աստուածս: Տո՛ւր ինձի՝ մեղանչած հոգիիս՝ արտասուքի շնորհքը, որպէսզի լուամ անթիւ մեղքերս, և փրկուիմ չար հրեշտակներու ձեռքէն, որոնք անողորմ կերպով գեհենի կրակին մէջ կը նետեն ամբարիշտը:

Փրկե՛ զիս՝ ամբարիշտս, Քու ողորմութեանդ պարգևով: Զիս երանաւէտ դրախտէդ ներս ընդունե՛ կատարեալ արդարներուն հետ: Ընդունե՛ մեղաւոր ծառայիդ աղօթքները՝ բարեխօսութեամբը սուրբերուն, որոնք Քեզի հաճելի եղան, ո՛վ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ ես Հօրը և Սուրբ Հոգիին հետ, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



4

Ontario MPPs Aris Babikian and Belinda Karahalios deliver masks to ACC-Cambridge

CAMBRIDGE—On May 2, Cambridge MPP Belinda Karahalios and Scarborough—Agin-court MPP Aris Babikian delivered masks and gloves to the Cambridge Armenian Community Centre. The Ontario MPPs

had a very productive discussion with the leaders of the Armenian community about COVID-19, the efforts of the Ontario provincial government to stop the spread of the pandemic, and the future plans to open the economy.

EU supports vulnerable families in Armenia’s regions

YEREVAN — The European Union continues supporting the most vulnerable households with elderly people, people with disabilities and large families in the regions of Armenia, in response to the COVID19 outbreak, the EU Delegation in Armenia informs.

This time EU Ambassador Andrea Wiktorin visited the Armenian Red Cross Society’s

warehouse to dispatch humanitarian aid packages comprising food and hygiene supplies.

The humanitarian aid packages will be now delivered straight from the warehouse to 1,485 elderly from Shirak region in close partnership with the Armenian Red Cross Society, as well as local and regional authorities.

(Armradio)

Australian lawmakers to push for Armenian Genocide recognition

CANBERRA — COVID-19 forced the Australian National Commemoration of the Armenian Genocide to go virtual this year, but that did not stop a record number of Federal and State Parliamentarians joining growing calls for a change in the national position on the Armenian Genocide, which the Armenian National Committee of Australia (ANC-AU) labelled “untenable”.

The position of Australia to appease its ally, the denialist dictatorship of Turkey, remained

unchanged for 2020. However, messages correctly characterising the events of 1915 as genocide by Federal parliamentarians Trent Zimmerman, Joel Fitzgibbon, Tim Wilson, Kristina Keneally, Adam Bandt and Rex Patrick, as well as New South Wales State Premier Gladys Berejiklian, Shadow Treasurer Walt Secord and the Speaker of the Legislative Assembly Jonathan O’Dea means Canberra’s position is becoming more impossible to sustain.

Dr. Aline D. Khatchikian to Chair the Canadian Association of Radiologists’ Resident and Fellow Section

MONTREAL—Dr. Aline D. Khatchikian, a second-year resident in Diagnostic Radiology at McGill University, was appointed Chair of the Canadian Association of Radiologists’ (CAR) Resident and Fellow Section, and is expected to be the Resident Representative on CAR’s Board of Directors following the next annual general meeting. Dr. Khatchikian, whose chairmanship began on April 18, is the first resident physician from Quebec or McGill to hold this position.

Dr. Khatchikian completed her MD in 2018 at Université Laval. Described as a citizen of the world, she has extensive international experience delivering advocacy training sessions to medical students in multiple countries including Switzerland, Brazil, Mexico, Peru, and Uruguay.

In 2015, Dr. Khatchikian was appointed Regional Public Health Director for the Americas’ Region of the International Federation of Medical Students’ Associations, leading projects in over fifteen countries. In 2017, she organized the Youth Pre-World Health As-

sembly on human resources for health, in collaboration with the World Health Organization. That same year, she became Board Member of the Quebec Medical Association. In 2018, she received the Canadian Medical Association Award for Young Leaders in recognition of her advances in global health and medical education. She is currently pioneering the first global outreach network for Canadian radiologists and interventional radiologists, to address the gap in access to medical imaging worldwide.

As Chair of the Resident and Fellow Section, Dr. Khatchikian will work with radiology residents, fellows and medical students across Canada to promote the value of radiology and ensure a smooth transition to practice. She will focus on developing a national database for elective and fellowship opportunities, in addition to a medical student mentorship program. Above all, she will encourage her peers to become engaged in local, national and international advocacy projects as CAR members.

‘We cannot return to the past’: Artsakh President responds to Lavrov

STEPANAKERT—Artsakh President Bako Sahakian on April 30 said that there will be no return to the past, both interns of territories and status of Artsakh, directly responding to statements made last week by Russian Foreign Minister Sergey Lavrov, who claimed that the Karabagh peace talks were focused on a “phased” approach, which envisions ceding of territory to Azerbaijan as a first step to a settlement of the Karabagh conflict.

Speaking to a session of parliament where he presented a “state of the state” address detailing the progress made by his government in the past year, Sahakian said that the Artsakh authorities have not deviated from their principles regarding Artsakh. He also added that official Yerevan has already refuted Lavrov’s claims by saying that such an approach was not part of the negotiations.

“When we reflect on the Karabagh issue,

we are talking about our destiny,” Sahakian said, adding that while he always has publicly and privately supported the OSCE Minsk Group’s mission of establishing peace, he has always advanced the notion that Artsakh’s security and independence could not be bargained with.

“During these years, we [Artsakh] have not deviated in any way, either from our position or from our principles,” said Sahakian, describing the Azerbaijan-Karabagh conflicts as “one of the most complicated issues in the world.”

“Taking all this into consideration and respecting the interests of the international community, we are obligated to achieve a peaceful resolution to the conflict, while strongly maintain our position,” explained Sahakian who said that Artsakh will always “respect the proposals of the Co-Chairs and their sincere efforts to resolve the conflict.”

Stepanakert remembers brutal attacks on Getashen, Martunashen, Shahumyan

STEPANAKERT—The Artsakh Foreign Ministry on April 30 issued a statement marking the 29th anniversary of the Soviet and Azerbaijani forces’ attacks on Getashen, Martunashen and Shahumyan, which became the spark for the Karabagh war.

The operation known as “Koltso”—or “Ring”—was organized and coordinated by the central authorities of the Soviet Union and Azerbaijan, whose aim was to surround and empty Artsakh of its Armenian population.

Below is the Artsakh foreign ministry’s statement.

29 years ago, under the direct organization and coordination of the central authorities of the USSR and Azerbaijan, a large-scale operation called “Koltso” (“Ring”) was carried out to deport the Armenian population of the borderline villages of Artsakh. This bloody operation ultimately transferred the Azerbaijan-Karabagh conflict to the military phase, initiating the subsequent full-scale aggression of Azerbaijan against the Republic of Artsakh (Nagorno-Karabagh Republic).

On April 30, 1991, the massive shelling of Getashen and Martunashen villages of the Shahumyan region launched the operation ‘Koltso’, in the course of which tanks, combat helicopters, and artillery were employed for the first time against the civilians. Azerbaijani special police units (OMON), with the support of internal troops of the USSR Ministry of Internal Affairs and the Soviet Army, broke into Armenian villages formally supposedly for “checking the passport regime”, but in fact for killing, robbery, terror against the Armenian population, followed by deportation.

As a result of the military-police actions, dozens of Armenian villages of Northern Artsakh, as well as the Shahumyan, Hadrut and Shushi regions were destroyed, about ten thousand people were deported, over 100 people were killed, and hundreds of people were taken hostage. The fate of many of them remains unknown so far.

The Azerbaijani authorities considered the operation ‘Koltso’ as the beginning of the com-

plete cleansing of Artsakh from the Armenian population. It became another manifestation of the policy of ethnic cleansing conducted by Azerbaijan in 1988-1991 in Sumgait, Baku and other settlements of the Azerbaijani SSR, as well as in the villages of Northern Artsakh.

The Armenian pogroms carried out by the Azerbaijani authorities in response to the demand of the people of Artsakh to exercise its inalienable right to self-determination and the subsequent military aggression against the Republic of Artsakh in 1991, which was repeated in April 2016, demonstrated that only the establishment and strengthening of an independent statehood can ensure the right of the people of Artsakh to live freely and safely in its homeland. The international community’s recognition of this reality and the international recognition of the Republic of Artsakh will become an additional deterrent against Azerbaijan’s desire to unleash a new war and will ensure peace and security in the entire region of the South Caucasus.

IMF plans \$280 million in emergency funds for Armenia

YEREVAN—The International Monetary Fund will likely disburse next month \$280 million in emergency loans designed to help Armenia fight the coronavirus outbreak and mitigate its economic consequences, a senior IMF official said over last weekend.

Yulia Ustyugova, the fund’s resident representative in Yerevan, told RFE/RL’s Armenian service that the IMF is also planning \$140 million in additional funding to Armenia.

The Armenian government announced last week plans to borrow around \$540 million for cushioning the impact of an unfolding economic recession in the country. Finance Minister Atom Janjughazyan said the government needs to offset a major shortfall in its tax revenues and to continue financing coronavirus relief measures.

Ustyugova said that IMF officials have recommended the \$280 million disbursement to the fund’s executive board, which should approve it in the second half of May. She said the sum includes a \$248

million “stand-by arrangement” which was allocated to Armenia in May 2019 and has not been used by the latter until now.

“Also, the [Armenian] authorities have requested additional financial help from the IMF to help pay for the economic support program and necessary healthcare expenditures in the current environment,” said Ustyugova.

“So \$280 million will be available in the second half of May. The program itself will last until May 2022, and about \$140 million will additionally be available after May 2020,” added the IMF official.

She insisted that the emergency borrowing is justified even though it will lead to a sizable increase in Armenia’s foreign debt.

The Armenian government has promised a wide range of coronavirus-related compensatory measures, including cash payments to a large part of the population, financial assistance to businesses and loan subsidies for farmers. According to Jan-

jughazyan, it plans to spend \$150 billion drams (\$315 million) for this purpose this year.

Ustyugova praised the government’s “swift” response to the economic fallout from the global health crisis. “We welcome the package of economic policy measures that was announced by the authorities,” she said.

In its World Economic Outlook released earlier this month, the IMF forecast that the Armenian economy will shrink by 1.5 percent this year due to the coronavirus pandemic. The Armenian Ministry of Finance expects a 2 percent drop in GDP.

Ustyugova stood by the IMF projections. “We currently see the pandemic having a very sharp but also very short-lived impact on Armenia,” she said. “So we expect the peak of the shock to happen around the second quarter, with some slight recovery starting already in the third quarter [of this year,] and an acceleration of economic activity in the fourth quarter to 2021.”

(RFE/RL)

ASSAULT-STYLE GUNS NOW BANNED IN CANADA

Prime Minister Justin Trudeau has made the announcement of a new federal government ban on 1,500 models and variants of assault-style weapons, some of which have been used in some of the most horrific incidents in modern Canadian history. The prime minister made the announcement alongside Deputy Prime Minister Chrystia Freeland, Justice Minister David Lametti, and Public Safety Minister Bill Blair on Parliament Hill.

“Effective immediately, it is no longer permitted to buy, sell, transport, import or use military-grade assault weapons in this country. There is no need in Canada for guns designed to kill the largest amount of people in the shortest amount of time. That was a commitment we made in the last election, and it’s something on which there is a large consensus by Canadians who want to see less violence and fewer deaths of gun violence in this country,” Trudeau said.

Trudeau recognizes that there is still a lot more to do and he said that he will be working with all the provinces to further develop even provincial level gun control relating to handguns. Trudeau also said, “all buyback programs will need to be made into bills, and so we will have to work with the other parties, with different groups throughout the country, to make sure that this buyback program [is] the best one, that it be fair, and we want it to have the necessary impact.”

“Protecting human lives must come above all else,” said Minister Bill Blair.

HELP ON THE WAY FOR STRUGGLING STUDENTS

During a press conference held by Prime Minister Justin Trudeau, he announced the Canada Emergency Student Benefit. This new support is part of a \$9-billion plan to help post-secondary and recent graduate students. This plan is set in place to help students give them the financial support they need this summer, help them continue their studies in the fall, and to provide the support and opportunities they need to get through this pandemic. This benefit would provide \$1,250 per month for eligible students or \$1,750 per month for eligible students with dependents or disabilities. This benefit will be available for all eligible students from May to August 2020.

Minister of Diversity and Inclusion and Youth, Bardish Chagger, said, “Having spent most of my career teaching students and trying to prepare them for life outside of the classroom, I understand how difficult and stressful the current situation must be for them. These are challenging times, but with today’s announcement, as promised, our government is providing Canadian students with the support and opportunities they need to get through this and keep moving forward.”

Minister of Employment, Workforce Development and Disability Inclusion, Carla Qualtrough said, “In order to ensure that post-secondary students are able to confidently continue their studies in the fall, our government is proposing significant measures to support them. From students who were counting on summer employment to pay their tuition to recent graduates who were planning to start their careers, our government has their back during this challenging time.”

ONTARIO LIBERAL PARTY LEADER STEVEN DEL DUCA TO FORD: ESTABLISH AN ONTARIO INDEPENDENT JOURNALISM FUND

On April 30, I had the privilege to sit in a meeting with Ontario Liberal Party Leader Steven Del Duca and discuss the struggles of independent and ethnic news outlets. Due to the current COVID-19 pandemic many independent and ethnic news outlets have taken a severe financial hit. Some outlets like the Canadian Jewish News have closed their doors and many others have been having a difficult time keeping their doors open.

Del Duca said that in these troubled times independent and ethnic news outlets are a “foundational part of our economy.” He mentioned that the work they do is extremely vital in delivering the ever so important to all communities in our province and country.

In a letter to Premier Douge Ford, Del Duca said, “Ontario’s media has been vital to combating COVID-19. You yourself have lauded the efforts of journalists to inform the public about our public health crisis. However, media in Ontario have not been spared from cutbacks. Advertising revenue is down, and many small and independent publications are in danger.”

Unfortunately most of these independent and ethnic news outlets are not eligible for the current government programs, as the size of their payrolls are not large enough. “Today (April 30), I am calling for an Ontario Independent Journalism Fund to aid these small publications and help them bridge to better times,” said Del Duca. He reassured that he will do everything he can to assist all independent and ethnic news outlets keep their doors open.

ISHKHAN GHAZARIAN

Sharing joy and bread in Gyumri

BY SARAH STITES^(*)

paychecks, but their dignity.

Despite this, Tigranuhi saw no other option but to close the bakery for the first two weeks of the quarantine. At the same time, she was working with her team at Emili Aregak to distribute hygiene items and food to carry the centre’s beneficiaries through the difficult time.

On April 1, a few bakery staff returned to the empty cafe to bake reduced quantities of bread for delivery only. At the end of the day, someone bought the leftover loaves and asked that they be sent to several of the Emili Aregak families in need.

Tigranuhi remembers thinking: “Why not start fundraising for the bakery so that we can deliver bread to the community of Gyumri and people can return to work?”

It was a “proactive” and “Aregak-style” solution, she says. The idea aligned with the bakery’s commitment to both supporting vulnerable groups as well as providing employment against all odds.

It also reflected Aregak’s innovative business model and unitive approach to work.

With the help of a few donors, the bakery mobilized and ramped up its bread production. Armenian Caritas helped the team identify people in need. And some of the baristas and cashiers donned masks and gloves and became the delivery team.

The campaign was announced on Facebook with a photo from the first delivery. The post depicted a recipient of the bread — a elderly woman living in one of Gyumri’s half-ruined buildings, a remnant of the 1988 Spitak Earthquake.

That photo “united a lot of people,” Tigranuhi says.

Lukshmi, an American donor with Armenian friends, says that the picture of the woman “broke my heart.”

“There are just some things you can’t unsee,” she says, “especially when it’s of those particularly vulnerable. When you see this picture, you’re forced to accept that this is someone who truly cannot help herself, someone that without another person’s help, would go hungry.”

Lukshmi, who had to postpone her wedding celebration because of the pandemic, decided to focus on her blessings. She was one of the first donors to the campaign. Then her fiancé and mom joined in. Finally, Lukshmi decided to ask her friends to contribute to Aregak in lieu of sending gifts for her big day.

“For me, staying home is a luxury — I have all of the necessities plus more than I could ever need,” Lukshmi says. “This woman? I can’t imagine the emotional and mental toll staying in her home... I just knew I had to help.”

Other donors were thankful for the opportunity to support a local initiative. “You make me proud to be Armenian,” a woman named Nana

wrote in a message sent with her contribution.

With the donations that began coming in, more staff were brought back to work. Aregak’s croissant specialist Kima, mom of an autistic son, quickly learned how to work with bread dough to help the bakery produce the extra loaves being sent out to the community per day.

Kima says she’s “thankful for the opportunity to receive a paycheck during this difficult time” and “especially” thankful to the donors for their role in making that possible.

Julietta, an elderly recipient, showered her thanks on the delivery team. “[The bread] was very delicious,” she told them. “It lasted me a few days.”

Hasmik, who lives alone in a small “temporary” home and suffers from a painful disability, echoed these sentiments. “Thank you to the senders and the bringers,” she said with feeling. “Not one soul has come to my house for a very long time.”

Through the campaign, Aregak Bakery is putting its slogan #ShareOurJoy into action. Although the bread primarily satisfies a physical need, it also brings a ray of hope into the lives of those who need it right now.

